ԿԱՐԳ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի կարիքների համար՝ Սերվերի ներդրման գնման 42/23 ՍՆ ծածկագրով բաց մրցույթի

Հարգելի մասնակից,

- նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն կարգը, քանի որ կարգին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Միաժամանակ

- Հայտերը ներբեռնելիս և ներկայացնելիս պետք է առաջնորդվել մրցութային հանձնաժողովի կողմից հայտարարված բաց մրցույթի ժամանակացույցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սերվերի ներդրման գնման 42/23 ՍՆ ծածկագրով բաց մրցույթի

1. Սերվերի ներդրման համար անհրաժեշտ աշխատանքները:
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հայտը ներկայացնելու կարգը
4. Հայտերի բացումը, գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը
5. Պայմանագրի կնքումը
6. Բաց մրցույթը չկայացած հայտարարելը

1. Սերվերի ներդրման համար անհրաժեշտ աշխատանքները.

1.1 Սերվերի ներդրման համար անհրաժեշտ աշխատանքների ցանկը տես Տեխնիկական առաջադրանքում:

2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

2.1 Մասնակիցների մասնակցության իրավունքի չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

- եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է բաց մրցույթով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, ներառյալ՝ բաց մրցույթի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարությունները (Հավելված 1, 2, 3 Անհրաժեշտ փաստաթղթերի), ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,
- բացի անհրաժեշտ փաստաթղթերից, պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն իրավաբանական անձինք՝

- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

Եթե Մասնակիցը ներկայացրել է սույն կարգի 2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար կարգով պահանջվող՝

- մասնագիտական փորձառություն,
- ֆինանսական միջոցներ:

<u>Հայտը ներկայացնելու կարգը</u>

3.1 Հայտերը պետք է ներկայացնել մինչև դրա համար սույն կարգով սահմանված ժամկետի ավարտը:

3.2 Հայտերը պետք է ներկայացնել ծրարներով՝ սոսնձված և փակման տեղում կնքված, կազմված բնօրինակից:

3.3 Ծրարի վրա պետք է նշել՝

ա) հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) մրցույթի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ, կամ բացված տեսքով, կամ վնասված փաթեթ ստանալու դեպքերում:

Ժամկետից ուշ ստացված, կամ էլեկտրոնային եղանակով ուղարկված հայտերը ՉԵՆ ԲԱՑՎԻ ԵՎ ՉԵՆ ԴԻՏԱՐԿՎԻ:

<u>3. Հայտերի բացումը, գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը</u>

4.1 Հայտերի բացման նիստում մրցութային հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարում է բացված և հրապարակում է ստացված հայտերը:

4.2 Գնահատման գործընթացը կատարվում է բաց մրցույթի պահանջներին համապատասխան: Ընդ որում, հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է սույն կարգի պահանջներին համապատասխան ներկայացված փաստաթղթերից որևէ մեկը:

4.3 Գնահատման արդյունքները վավերացվում են մրցութային հանձնաժողովի նախագահի կողմից, որից հետո հայտերը դասակարգվում են ըստ գնահատման արդյունքների՝ նվազագույն գնային առաջարկից մինչև առավելագույն գնային առաջարկը:

4.4 Մրցութային հանձնաժողովն անմիջապես ստեղծում է գնահատման մասին արձանագրությունը:

4.5 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

4.6 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Պայմանագրի կնքումը

5.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման և դոնոր կազմակերպության հաստատման հիման վրա (եթե կա դոնորի կողմից նման պահանջ)՝ Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր:

5.2 Ընտրված մասնակցի հայտարարմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

5.3 Պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ստացած Մասնակիցը պարտավոր է ընդունել կամ մերժել իրեն ներկայացված առաջարկը գրավոր:

6. Բաց մրցույթը չկայացած հայտարարելը

6.1 Մրցութային հանձնաժողովը սույն բաց մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

- հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի պայմաններին.
- դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
- ոչ մի հայտ չի ներկայացվել.
- հաղթող ճանաչված մասնակիցը հրաժարվում է պայմանագիր կնքել:

6.2 Բաց մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն իր կայքում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը: